ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 95

«26» դեկտեմբերի 2019 թվական գյուղ Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ(ԲՆԱԿԱՎԱՅՐ ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴ), ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՈՒՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի>> 39-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի Համլետ Ասատուրի Հարությունյանը, իր 2019 թվականի դեկտեմբերի 09-ի դիմումի համաձայն ընդունել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Վահրամաբերդ բնակավայրում գտնվող համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-108-0085-0027 կադաստրային ծածկագրով 0.08669 հեկտար հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տան շինության և համապատասխան հողամասի ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը, Հայաստանի Հանարապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին որոշում է

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայքնի Վահրամաբերդ բնակավայրում գտնվող համայանքի սեփականություն հանդիսացող 08-108-0085-0027 կադաստրային ծածկագրով 0.08669 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված, օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված 67.25 քառակուսի մետր ներքին և 84.51 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան շինությունը (վկայական N04062019-08-0015 հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ Մարմաշեն համայնք, գյուղ Վահրամաբերդ ԼԵՆ-ԳԷՍ թաղամաս 2-րդ խճուղի թիվ 7 տուն) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի կարգով 333000 /երեքհարյուր երեսուներեք հազար / ՀՀ դրամ արժեքով վաճառել կառուցապատողին՝ քաղաքացի Համլետ Ասատուրի Հարությունյանին (նույնականացման քարտ 007974819, տրված 01.02.2016թ, 030-ի կողմից, բնակության հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ Մարմաշեն համայնք, գյուղ Վահրամաբերդ ԼԵՆ-ԳԷՍ թաղամաս 1-ին շենք, բնակարան 11) վաճառելու համար:

2. Մարմաշեն համայնքի ղեկավար Կարեն Արշակյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	*Դեմ՝*	*Ձեռնպահ՝*
ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ՝	----------	----------	----------
ԱՐՏՅՈՄ ԶԱՔԱՐՅԱՆ՝	----------	----------	----------
ՍԼԱՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝	----------	----------	----------
ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ՝	----------	----------	----------
ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ՝	----------	----------	----------

ԿԱՄՈ ՂԱՆԴԻԼՅԱՆ՝ ---------

ԶԱՆԻԲԵԿ ՂԱՖԱՐՅԱՆ՝ ---------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

«26» դեկտեմբերի 2019 թվական
գյուղ Մայիսյան